«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

1 հունիսի 2021թ. N 34-Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.4.2 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հունիսի 1-ի N 34-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Անդամակցության հանձնաժողովի գործառույթները 3
3 Անդամակցության հանձնաժողովի կազմավորման կարգը 5
4 Անդամակցության հանձնաժողովի նիստերը 5
5 Անդամակցության հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները 6
6 Անդամակցության հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները 7
7 Անդամակցության հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը 7
8 Անդամակցության հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 7

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնադրությունը մշակվել էի կատարումն«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.4.2 կետերիպահանջների։

1.2 Սույնկանոնադրությամբ սահմանվում են Պալատի անդամակցության հանձնաժողովի (այսուհետ՝ Անդամակցության հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը։

1.3 Անդամակցության հանձնաժողովը Պալատի մշտական գործող հատուկ մարմին է։

1.4 Անդամակցության հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով, Պալատի կանոնադրությամբ, «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության կարգով (այսուհետ՝ Անդամակցության կարգ),սույն Կանոնադրությամբ և Պալատի համապատասխան այլ ներքին իրավական ակտերով։

1.5 Անդամակցության հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության հանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊանդամակցության հանձնաժողով»:

1.6 Անդամակցության հանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին։ Անդամակցության հանձնաժողովը կարող է ունենալ իր անվանմամբ հայերենով, ռուսերենով և անգլերենով ձևաթղթեր և/կամ անհատականացման այլ միջոցներ։

1.7 Անդամակցության հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով։

2. Անդամակցության հանձնաժողովի գործառույթները

2.1 Անդամակցության հանձնաժողովի հիմնական գործառույթներն են.

2.1.1 Կազմակերպել Պալատին անդամակցության գործընթացը՝

ա) Իրականացնել Պալատին անդամակցության համար դիմած աուդիտորի և/կամփորձագետ հաշվապահի որակավորում ունեցող անձանց՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, Պալատի Կանոնադրությանը և Անդամակցության կարգի պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն (նախնական փորձաքննություն) և այդ ուսումնասիրության հիման վրա Պալատի խորհրդին առաջարկություններ ներկայացնել Պալատին անդամակցելու վերաբերյալ,

բ) Իրականացնել Պալատին անդամակցության համար դիմած կազմակերպությունների՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական

գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքին, Պալատի Կանոնադրությանը և Անդամակցության կարգին համապատասխանության ուսումնասիրություն (նախնական փորձաքննություն) և այդ ուսումնասիրության հիման վրա Պալատի խորհրդին առաջարկություններ ներկայացնել Պալատին անդամակցելու վերաբերյալ,

2.1.2 Կազմակերպել հսկողություն Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից շարունակական մասնագիտական զարգացման պահանջների պահպանման նկատմամբ՝

ա) Սահմանել Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված՝ շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ուսումնասիրությունների պարբերականություն և ընտրանքային ստուգմանընթացակարգ,

բ) Պալատի աշխատակազմից ստացված նյութերի և տեղեկատվության հիման վրա իրականացնել Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված՝ շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրություններ,

գ) Ուսումնասիրությունների արդյունքները պարբերաբար ներկայացնել Պալատի խորհրդին,Կարգապահական հանձնաժողովին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ համապատասխան հանձնաժողովներին և աշխատակազմին:

2.1.3 Իրականացնել Պալատի անդամակցության հետ կապված՝ Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ և Պալատի խորհրդի կողմից տրված այլ հանձնարարություններ:

2.2 Բացի 2.1 կետում նշված գործառույթներից, Անդամակցության հանձնաժողովը կարող է իրականացնել նաև հետևյալ գործառույթները.

2.2.1 Սերտորեն համագործակցել Պալատի մյուս հանձնաժողովների հետ՝ անդամների և լայն հասարակության համար տեղեկատվության ազատ հոսք ապահովելու նպատակով,

2.2.2 Օժանդակել Պալատի աշխատակազմի կողմից Պալատի անդամների հետ փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը,

2.2.3 Գործնական կապեր հաստատել և համագործակցել արտերկրի համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ,

2.2.4 Գործնական կապեր հաստատել և իր գործառույթների մասով համագործակցել պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների համապատասխան մասնագետների, ստորաբաժանումների հետ:

3 Անդամակցության հանձնաժողովի կազմավորման կարգը

3.1 Անդամակցության հանձնաժողովի անդամ կարող են լինել Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները:

3.1.1. Անդամակցության հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Անդամակցության հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Անդամակցության հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը: (***փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 17-Լ)***

3.2 Անդամակցության հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից, որոնցից առնվազն 5-ը պետք է լինեն աուդիտորներ: ***(փոփոխված 17.11.2021թ. խորհրդի որոշում 65-Լ)***

3.3 Անդամակցության հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Անդամակցության հանձնաժողովի նախագահը, նշանակվում են Պալատի խորհրդի կողմից: (***փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 17-Լ)***

3.4 Պալատի խորհրդի կողմից նախապես նշանակվում է Անդամակցության հանձնաժողովի նախագահը:

3.5 Պալատի աշխատակազմնէլեկտրոնային փոստի և/կամ Պալատի պաշտոնական կայքի միջոցով հայտարարություն է տարածում Անդամակցության հանձնաժողովի անդամների թեկնածուների ներգրավման վերաբերյալ:

3.6 Անդամակցության հանձնաժողովի անդամ կարող էընտրվել աուդիտորական գործունեության կամ հաշվապահական հաշվառման հետ կապվածառնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը:

3.7 Անդամակցության հանձնաժողովի նախագահն ուսումնասիրում է Պալատի աշխատակազմի կողմից իրեն ներկայացված Անդամակցության հանձնաժողովի կազմում ներգրավվելու հետաքրքրություն ունեցող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվով անդամների: Անդամակցության հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է անհրաժեշտ թվով Անդամակցության հանձնաժողովի անդամներին:Խորհուրդը,Անդամակցության հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում թեկնածուների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները:

3.8 Այն դեպքում, երբ Անդամակցության հանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ (մինչև 4 տարվա ժամկետի լրանալը) դադարում է, ապա սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Անդամակցության հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ (պաշտոնավարումը դադարած) անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

4 Անդամակցության հանձնաժողովի նիստերը

4.1 Անդամակցության հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով:

4.2 Անդամակցության հանձնաժողովի նիստը հրավիրվում է Անդամակցության հանձնաժողովի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ, ինչպես նաև կամ Անդամակցության հանձնաժողովի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ: Նիստերի արդյունքներն արձանագրվում են: Նիստերը նախագահում է Անդամակցության հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա անդամներից տարիքով ավագը:

4.3 Անդամակցության հանձնաժողովում քվորումն առկա է, եթե նիստին մասնակցում են անդամների կեսից ավելին: Անդամակցության հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստիններկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Անդամակցության հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

5 Անդամակցության հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

5.1 Անդամակցության հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

5.1.1 մասնակցել Անդամակցության հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը,

5.1.2 ներկայացնել հարցեր Անդամակցության հանձնաժողովի նիստերում քննարկելու համար,

5.1.3 արտահայտել տեսակետ Անդամակցության հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ,

5.1.4 Անդամակցության հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից:

5.2 Անդամակցության հանձնաժողովի անդամները պարտավոր են.

5.2.1 մասնակցել Անդամակցությանհանձնաժողովի նիստերին: Եթե Անդամակցության հանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին նախապես տեղեկացնի Անդամակցության հանձնաժողովի նախագահին:

5.2.2 սահմանված ժամկետներում իրականացնել իրենց հանձնարարված աշխատանքները:

5.3 Անդամակցության հանձնաժողովի անդամներն իրավասու չեն իրենց լիազորությունները փոխանցել այլ անձանց:

5.4 Եթե Անդամակցության հանձնաժողովի անդամն անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ մեկ տարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի կեսից ավելիից, ապա Անդամակցության հանձնաժողովը նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմելուՊալատի խորհրդին՝ տվյալ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և փոխարենը նոր անդամ նշանակելու հարցով:

6 Անդամակցության հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

6.1 Անդամակցության հանձնաժողովի գործունեությունը կազմակերպում է Անդամակցության հանձնաժողովի նախագահը։

6.2 Անդամակցության հանձնաժողովի նախագահը.

6.2.1 կազմակերպում և ղեկավարում է Անդամակցության հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները,

6.2.2 ապահովում է Անդամակցության հանձնաժողովի առջև դրված խնդիրների պատշաճ և ժամանակին կատարումը,

6.2.3 բաշխում է պարտականություններնԱնդամակցության հանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ,

6.2.4 որոշում է Անդամակցության հանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ձևը, ամսաթիվը, ժամանակը և վայրը,

6.2.5 հրավիրում և անցկացնում է Անդամակցության հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք,

6.2.6 ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը և պահպանումը,

6.2.7 Պալատի խորհրդին զեկուցում է Անդամակցությանհանձնաժողովի տարեկան ծրագրի և տարեկան գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ,

6.2.8 որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության։

7 Անդամակցության հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը

7.1 Անդամակցության հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, որը ներկայացնում է Պալատի խորհրդի հաստատմանը՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան նախորդող նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

7.2 Անդամակցության հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

8 Անդամակցության հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

8.1 Անդամակցության հանձնաժողովի նյութատեխնիկական ապահովումը և նրան անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Անդամակցության հանձնաժողովի կողմից կազմված և Պալատի

խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և դրա իրականացման նպատակով նախատեսված նախահաշիվների համաձայն: